



Ազդեցության տակ

Կենտրոնացում

«Ուստի եթե Որդին ձեզ ազատ դարձնի, դուք հիրավի ազատ կլինեք» (Հովհ. 8.36):

Զվարճություն

Նստիր մի շրջանակի մեջ: Սկսելով մի թղթե ամրակից կամ այլ փոքրիկ առարկայից՝ փոխանցիր այն քո ձախ կողմում գտնվող անձնավորությանը և առևտուր արա նրա հետ՝ խնդրելով, որ փոխանակվի քեզ հետ ավելի լավ կամ ավելի մեծ մի առարկայով: Հիմա, վերցրու մի նոր առարկա և, մոտենալով մեկ այլ անձնավորության, նորից առևտուր արա և խնդրիր, որ այն փոխանակի ավելի լավ կամ ավելի մեծ մի առարկայով: Շարունակիր այնքան, մինչև բոլորը հնարավորություն ունենան մասնակցելու: Թող խմբի անդամները վերջում որոշեն, արդյոք ուրախ են իրենց արած առևտրով, թե ուզում են հետ փոխանակել:

Ուսումնասիրություն

Բանալի համարներ՝ Մարկոս 5.1-20, Ղուկաս 10.17-21:

Որպեսզի մենք Աստծո ուզածի պես ազատ լինենք, պետք է հասկանանք հետևյալը.

- *Դներն իրոք գոյություն ունեն:*
Հրեշտակների մեկ երրորդը սատանայի հետ երկնքից ընկավ, երբ ապստամբեցին Աստծո առաջ: Այս ընկած հրեշտակները դներ են: Մարկոս 5-րդ գլխում մենք կարդում ենք մի մարդու մասին, ով գտնվում էր բազմաթիվ դների ազդեցության տակ, և թե ինչպես էր այդ կապանքն ազդում նրա վրա:
- *Դներն իրոք մտնում են մարդկանց մեջ:*
Դները գալիս են միայն գողանալու, սպանելու և կործանելու համար (Հովհ. 10.1,10): Հավատացյալը չի կարող լինել դեռևս բռնված, *դիվահար* իմաստով, սակայն կարող է լինել դևի կառավարման կամ ազդեցության տակ:
- *Հիսուսն իրոք դուրս է քշում դներին:*
Հիսուսը դուրս էր քշում դներին, երբ ծառայում էր մարդկանց: Նա մեզ էլ, որպես հավատացյալներ, տվել է նույն իշխանությունը (Մաթ. 8.16, 9.32-33, 17.18, Մարկ. 3.14-15, 6.12-13, 16.17, Ղուկ. 10.17-21).

Քննարկում

1. Ի՞նչն էր ամենաօգտակարը քեզ համար այս պատգամի մեջ:
2. Ի՞նչ են քեզ ուսուցանել գերբնական բաների մասին: Միգուցե քեզ նախկինում սովորեցրել են, որ դևերն իրական չեն: Կամ էլ դու մեծացել ես սնահավատության այնպիսի մթնոլորտում, որտեղ ոչ միայն հավատում էին դևերի գոյությանը, այլ նաև վախենում էին դրանցից: Դու ունեցե՞լ ես փորձառություն Հիսուսի անունով դևեր հանելու:
3. Ի՞նչ ցուցիչներ կան, որ մարդը, հնարավոր է, գտնվում է դևի ազդեցության տակ:
4. Կարդա դեռավ բռնված մարդու պատմությունը Մարկոս 5.1-20 հատվածից: Ո՞րն է այս պատմության մեջ շրջադարձային կետը: Ի՞նչ արեց այդ մարդը, որպեսզի ազատագրվեր: Ի՞նչ արեց Հիսուսը:
5. Քո կյանքում եղե՞լ է, որ ազատագրվես դևի ազդեցությունից: Այդ բժշկությունը միանգամի՞ց տեղի ունեցավ, թե՞ Աստված քեզ ինչ-որ ընթացքով անցկացրեց: Եթե ցանկանում ես, կարող ես այդ պատմությունը կիսվել քո խմբի հետ:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Եթե Որդին քեզ ազատի, իրոք ազատ կլինես:
- Դևերն իրոք գոյություն ունեն և իրոք մտնում են մարդկանց մեջ, ներառյալ՝ քրիստոնյաների:
- Հիսուսն ազատում է մեզ բոլոր տեսակի կապանքներից, երբ մենք խոնարհվում ենք և դիմում Նրա օգնությանը:

Աղոթիր

Հարցրու Աստծուն, թե քո կյանքի ո՞ր ասպարեզում է Նա ցանկանում, որ դու ազատագրվես:

Խնդրիր ընկերներիցդ մեկին, որ քեզ հետ միասին աղոթի այն խնդրի համար, որ Աստված քեզ ցույց կտա:

Նոր առաջնորդի հնարավորություն Եթե քո խմբում ինչ-որ մեկը ճգնաժամի մեջ է, դիմիր քո տարածքային առաջնորդին: Տարածքային առաջնորդը քեզ կօգնի աղոթքներով և կարող է նաև օգնել, որպեսզի հետագայում էլ օժանդակություն ստանաս, եթե զգաս, որ սվյալ իրավիճակը քո կարողությունից կամ փորձառությունից վեր է:



Ազդեցության տակ

Հովհ. 8.36, Մարկ. 5.1-20

1. Դներն իրոք գոյություն ունեն:

Մաթ. 8.16, Մաթ. 9.32-33, Մաթ. 17.18, Մարկ. 3.14-15, Մարկ. 3.14-15, Մարկ. 6.12-13, Մարկ. 16.17

2. Նրանք իրոք մտնում են մարդկանց մեջ:

Հովհ. 10.1, Հովհ. 10.10, Ղուկ. 21.19, Ողբ. 1.10, Ողբ. 4.12, Հովել 2.9

3. Հիսուսն իրոք դրանց դուրս էր հանում:

Ղուկ. 10.17-21, Մարկ. 5.6
